

աստնք, որ նախ՝ դուրս էին դժէն, երկրորդ՝ յարարեքելու տեսակէտէն խիստ վտանգաւոր: Անոնք արդէն իրենց գերը կատարած էին, այժմ ալ կէս փրատակի վերածուած: Յետոյ Միրզախանի խանն էր, որ թէեւ կարեւոր յարմարութիւն եւ իշխող դիրք ունէր, սակայն, չուկայի մէջ գտնուելով, ոչ մէկ կերպ չհրահանուեալ կարելի չէր, եթէ թըշնամին այրել ջանար: Ահա աստնք տեղի ունեցան Ապրիլ 12-ին եւ 13-ին, երբ չհրահանուով լքեցինք Մարութեանի դիրքերը: Միտամանար թուրքերը վառեցին Վանի շուկան, իսկ Միրզախանեանի խանը բռնկեց հետեւեալ պարտաներու մէջ — Վաշտ մը թուրք միլիտներ, զինուորական սպաներու զեկավարութեամբ, հետեւին ունենալով թնդանօթ մը, բանտի փողոցէն սկսեցին կոխը: Մարութեանի դիրքի հարաւ ընկած տուներու որմերը անոնք անխնայ ծակոտեցին: Քիչ վերջը հետեւեցան բերդի թնդանօթներու համազարկերը նոյն կէտերու շուրջը: Պէտք էր տեսնել, թէ ի՞նչպէս առատազի գերանները կը ճարտասէին, պատերը խալխալ կը խոռոպին վար: Բայց փոշեթաթախ մեր զինուորները կիսափուլ որմերու ետեւէն կը կասեցնէին թշնամուն:

Պէտք էր տեսնել այդ ահեղ վայրկեանը, երբ խմբապետը կը գոռար.

— Տղա՛յք, նշան բռնեցէք թնդանօթի բերնին, ահա կ'երեւի, տեղը փոխեցին...

Վերջին պահուն, երբ պատերու ետեւէն դուրս հանած՝ թուրքերը առաջ պիտի բերէին անխաւոր թնդանօթը, մերոնց բացած համազարկերը երկու թնդանօթածիղներ վար գլորեցին, եւ գործիքը մնաց լքուած, մնաց անտէր: Սակայն, մինչ այդ թուրք զինուորները, թնդանօթի կրակի պաշտպանութեամբ, պատ առ պատ առաջանալով մեր քանդուած եւ բաց դիրքերուն մօտեցած էին, 30 քայլ հեռաւորութեամբ: Սպայ մը ատրճանակը ձեռքին՝ իր զինուորներն առաջ կը մղէր.

— Հիւ՛նում, քիմէ կերի գալմասըն:

Տղայք հարկադրուած յետ քաշուեցան: Տեղը բաց էր, իսկ թշնամին մօտիկ եւ պատըսպարուած էր պատի ետեւը: Թէեւ թուրքերը մերոնց թողած տեղը գրաւել չկրցան, բայց

հնարաւորութիւն ունեցան լուծ թնդանօթը գործածութեան դնել:

Կացութեան ծանրութիւնն եւ առաջխաղացումը ժամանակաւորապէս կասեցնելու համար՝ մեր կողմէ ուժեր օգնութեան զրկուեցան: Անոնք թէեւ հասան, բայց ճանապարհին թանգ զոհ մը տուին: Փողոցին մէջ բերդէն գնդակահար ինկաւ ումարձիդ Վահանը, արի եւ յանդուզն երիտասարդ մը:

Կոխը շարունակուեցաւ: Սակայն, գիծէն դուրս այդ դիրքերը պահելը վտանգաւոր էր անցուղարձի համար. ամէն առթիւ լաւագոյն զինուորներ էին, որ ճանապարհին կը զարնուէին: Ուստի կարգադրուեցաւ կանգուն մնացած շէնքերը վառել եւ յետ քաշուիլ զծի վրայ:

Արդէն երեկոյ էր: Այդ թաղամասի բոլոր տուները, որոնց հետ եւ թուրքական մզկիթ մը, կրակի բոցերուն յանձնելով, մեր զինուորները անփտանգ անցան Շչկոյեանի եւ յարակից դիրքերը: Նոյն գիշերը թողուցինք Անապատի եւ Արբոյի տուները, առաջինը միայն վառելով:

Նոյն գիշերը թուրքերու կողմէ շուկան այրելով, կրակը անցաւ եւ բռնեց Միրզախանեաններու մեծ խանը: Հակառակ թափուած ամէն ջանքերու, կարելի չեղաւ չնքը պահել:

Երբ այսպէս երկու դիրքերը լքեցինք, Շահէն աղայի դիրքի մեր զինուորները խիզախ ձեռնարկով մը այրեցին Գաթըրջի ջամին, որ թուրքական ուժեղ դիրք մըն էր եւ ծանր վրտանդ այդ գծի վրայ: Գիշերուայ պահուն, խումբ մը զինուորներ յատուկ պատրաստուած ջրապղակի գործիքով առաջացան շէնքի դուռը եւ հեռուէն քարիւղ փչեցին ու կրակ տուին: Թշնամին ծայրայեղ աշխատանք թափեց խափանելու կրակը, բայց ասպարդիւն: Միայն երբ բոցերը բռնեցին բուն աղօթատան շէնքը, մեր զինուորները յետ քաշուեցան, տալով անզուշարար մէկ զոհ: Այնուհետեւ թուրքերը անցած այդ սրբավայրի մէջ քիչ անգամ ոտք դրին՝ իրենց բախտը փորձելու. մարգարէի եւ Ղուրանի ածխացած տաճարը մերժեց զիրենք:

Կոխը այնուհետեւ Ապրիլ 13, 14, 15 եւ 16-րդ օրերը համեմատաբար թոյլ էր: Զանազան դիրքերու շուրջը յարձակումները կը շա-